

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի  
Գիտական խորհրդի 2019թ նոյեմբերի 1-ի թիվ 139 նիստում  
ԳԿՄԿ գիտխորհրդի նախագահ՝ Ա.Գ.Սարգսյան



**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**  
**ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ**  
**ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1 ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետ՝ ԳԱԱ ԳԿՄԿ) ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ՝ ՌԻԳԸ) ԳԱԱ ԳԿՄԿ-ի ուսանողներին միավորող կառուցվածքային ստորաբաժանում է:
- 1.2 ՌԻԳԸ-ն իր գոգործունեությունը ծավալում է՝ ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, ԳԱԱ ԳԿՄԿ-ի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:
- 1.3 ՌԻԳԸ-ի կանոնադրությունը և նրանում կատարվող փոփոխությունները հաստատվում են ԳԱԱ ԳԿՄԿ-ի գիտական խորհրդի կողմից՝ ՌԻԳԸ խորհրդի նախագահի ներկայացմամբ:
- 1.4 ՌԻԳԸ-ն ունի խորհրդանշան, սահմանված կարգով կարող է ունենալ կնիք, անկյունային դրոշմ, պաշտոնաթուղթ և հաշվեհամար, ինչպես նաև միջոցառումների ժամանակ կարող է ՌԻԳԸ խորհրդի նիստի որոշմամբ ունենալ՝ հուշամեդալներ, ՌԻԳԸ պատվավոր անդամի կրծքանշան և ՌԻԳԸ խորհրդի կողմից հաստատված այլ հուշանվերներ:
- 1.5 ԳԱԱ ԳԿՄԿ-ի ՌԻԳԸ անվանումը.  
հայերեն՝ Ուսանողական գիտական ընկերություն,  
ռուսերեն՝ Студенческое Научное Общество,  
անգլերեն՝ Student Scientific Society:  
Իսկ կարճ անվանումները՝ հայերեն՝ ՌԻԳԸ, ռուսերեն՝ CHO, անգլերեն՝ SSS:

**2. ՌԻԳԸ-Ի ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

- 2.1 ԳԱԱ ԳԿՄԿ-ի ՌԻԳԸ նպատակն է նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը:
- 2.2 ՌԻԳԸ-ն իր նպատակներն ու խնդիրները իրականացնում է՝ համագործակցելով ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի ամբիոնների, ուսանողական խորհրդի, հանրային կապերի և զբաղվածության բաժնի և այլ ստորաբաժանումների հետ:

- 2.3 ՈւՌԸ-ի խնդիրներն ու գործունեության հիմնական ուղղություններն են՝
- 2.3.1 Գիտական և կրթական ոլորտներում ուսանողության նախաձեռնությունների սատարում և իրականացում,
  - 2.3.2 ուսանողական գիտաժողովների, սեմինարների, գիտահանրամատչելի դասախոսությունների և գիտական-կրթական ուղղվածություն ունեցող այլ միջոցառումների կազմակերպում,
  - 2.3.3 ԳԱԱ ԳԿՄԿ-ի երիտասարդական գիտական ներուժի նպատակաուղղված օգտագործում, նպաստել գիտական խմբերում և տարբեր գիտական ծրագրերում ուսանողների ընդգրկմանը,
  - 2.3.4 ԳԱԱ ԳԿՄԿ տնօրինության համաձայնությամբ շնորհաշատ ուսանողների, հայցորդների և ասպիրանտների աջակցում գիտական աշխատանքներ իրականացնելու ժամանակ,
  - 2.3.5 ուսանողների գիտական աշխատանքների և այլ նյութերի հրատարակում ԳԱԱ ԳԿՄԿ տնօրինության աջակցությամբ,
  - 2.3.6 ՀՀ-ում և նրա տարածքից դուրս գործող այլ բուհերի ՈւՌԸ-ների, գիտական կենտրոնների հետ կապի հաստատում, համատեղ միջոցառումների իրականացում:

### **3. ՈՒՌԸ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

- 3.1. ՈւՌԸ կառավարման մարմիններն են՝ ՈւՌԸ խորհուրդը և նախագահը:
- 3.2 ՈւՌԸ նախագահը, փոխնախագահները և ՈւՌԸ քարտուղարը ընտրվում են ՈւՌԸ խորհրդի նիստի ժամանակ՝ փակ քվեարկությամբ ՈւՌԸ խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:
- 3.3. ՈւՌԸ ընտրությունների արդյունքները արձանագրության տեսքով ներկայացվում է ԳԿՄԿ գիտական խորհրդի նիստին՝ հաստատման համար:
- 3.4. ՈւՌԸ խորհրդի նիստերը գումարվում են ամիսն առնվազն մեկ անգամ՝ նախագահի կամ նրա բացակայության դեպքում՝ նախագահին փոխարինող փոխնախագահի կողմից:
- 3.5. ՈւՌԸ արտահերթ նիստ գումարվում է խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի պատճառաբանված որոշման դեպքում, ոչ ուշ, քան 7 օրացուցային օրվա ընթացքում՝ ՈւՌԸ նախագահի կամ նրա բացակայության դեպքում՝ նախագահին փոխարինող փոխնախագահի կողմից: Արտահերթ նիստերը հրավիրվում են արտահերթ նիստի գումարման համար միջնորդած խորհրդի անդամների 1/3-ի ներկայացրած օրակարգով:
- 3.6. ՈւՌԸ խորհուրդը՝
- ա) հաստատում է ՈւՌԸ կանոնադրությունը, կատարում է փոփոխություններ դրանում և (կամ) հաստատում է նոր կանոնադրությունը, որը խորհրդի նախագահը ներկայացնում է ԳԿՄԿ գիտական խորհրդի նիստի հաստատմանը,
  - բ) երկու տարի ժամկետով ընտրվում են՝ ՈւՌԸ նախագահ, ՈւՌԸ գիտական գծով փոխնախագահ, ՈւՌԸ ընդհանուր հարցերի գծով փոխնախագահ, ՈւՌԸ միջազգային կապերի գծով փոխնախագահ, և ՈւՌԸ խորհրդի քարտուղար, ՈւՌԸ պաշտոնատար անձանց լիազորությունները կարող են դադարեցվել ՈւՌԸ խորհրդի նիստի գրավոր առաջարկությամբ ԳԿՄԿ գիտական խորհրդի նիստի որոշմամբ:
  - գ) ընդունում է ՈւՌԸ վերակազմակերպման և լուծարման մասին որոշումները,

ՈւՖԸ խորհուրդը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե ՈւՖԸ խորհրդի նիստին մասնակցում են ՈւՖԸ բոլոր անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Սույն կանոնադրությամբ ՈւՖԸ բարձրագույն մարմնի (խորհրդի) բացառիկ իրավասությանը ենթակա հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են, եթե կողմ են քվեարկել ՈւՖԸ բոլոր անդամների թվի կեսից ավելին: Մնացած հարցերով որոշումներն ընդունվում են նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

դ) ՈւՖԸ խորհրդը իրավունք ունի ՈւՖԸ աշխատանքները պատշաճ կազմակերպելու նպատակով ընդունել որոշումներ՝ տարատեսակ փաստաթղթերի ձևավորման համար:

ե) ՈւՖԸ ընտրական կարգը սահմանում է ՈւՖԸ խորհուրդը, անհրաժեշտության դեպքում ՈւՖԸ խորհուրդը իրավունք ունի որոշում ընդունելու ընտրությունները բաց քվեարկությամբ ացկացնելու համար:

զ) ՈւՖԸ ընտրություններին կարող են ձայնի իրավունքով մասնակցել խորհրդի ձայնի իրավունքով անդամները: ՈւՖԸ խորհրդի ձայնի իրավունքով անդամները հանդիսանում են խորհրդի նախագահը, փոխնախագահները և խորհրդի կողմից հաստատված ՈւՖԸ անդամները:

է) ՈւՖԸ ընտրությունների արդյունքները արձանագրության տեսքով ներկայացվում է ԳԿՄԿ գիտական խորհրդի նիստին՝ հաստատման համար:

ը) ՈւՖԸ խորհրդի որոշմամբ կարող են ձևավորվել ՈւՖԸ աշխատանքային հանձնաժողովներ՝ մշտական և ժամանակավոր, աշխատանքային խմբեր, ուսանողական ակումբներ, ինչպես նաև այլ միավորումներ, որոնք կնպաստեն ՈւՖԸ աշխատանքների բարելավմանը:

թ) ՈւՖԸ տարեկան աշխատանքները իրականացվում են համաձայն ՈւՖԸ խորհրդի կողմից հաստատված տարեկան աշխատանքային պլանի:

### **3.7. ՈւՖԸ նախագահը՝**

ա) հանդիսանում է ՈւՖԸ խորհրդի նախագահը և ղեկավարում է ՈւՖԸ աշխատանքները,

բ) ապահովում է ՈւՖԸ խորհրդի կողմից ընդունված որոշումների և հանձնարարականների կատարումը, իր իրավասության սահմաններում ընդունում է որոշումներ և ստորագրում է որոշումներ, կարգադրություններ,

գ) հաստատում է ՈւՖԸ աշխատակազմի հաստիքացուցակը,

դ) հանդիսանում է ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի ձայնի իրավունքով անդամ,

ե) որոշումներ է կայացնում ՈւՖԸ գործունեության բոլոր հարցերի վերաբերյալ, բացառությամբ ՈւՖԸ խորհրդի իրավասությանը պատկանող հարցերից,

զ) հրավիրում է ՈւՖԸ խորհրդի հերթական և արտահերթ նիստեր,

է) ՈւՊԸ փոխնախագահներին, խորհրդի քարտուղարին, ՈւՊԸ անդամներին սույն կանոնադրության շրջանակներում, կատարման համար կարող է փոխանցել ՈւՊԸ նախագահին վերապահված առանձին լիազորություններ,

ը) որոշում է կայացնում ՈւՊԸ-ին անդամագրելու և անդամությունից հեռացնելու վերաբերյալ՝ ըստ խորհրդի կողմից հաստատված կարգի

թ) հաստատում է ՈւՊԸ հիմնական միջոցառումների և աշխատանքների տարեկան պլանները, ծրագրերը և հսկում դրանց կատարման ընթացքը,

ժ) խորհրդի նիստի օրակարգում եղած հարցի մասին որոշում չկայացնելու դեպքում իրավունք ունի կայացնելու միանձնյա որոշում ներկայացված հարցի մասին,

3.8. ՈւՊԸ գործունեության ընթացքում օրենքով և սույն կանոնադրությամբ բարձրագույն մարմնի բացառիկ իրավասությանը չվերապահված և սույն կանոնադրությամբ չկարգավորված ցանկացած հարց լուծվում է նախագահի կողմից:

### 3.9. ՈւՊԸ փոխնախագահները՝

ա) կատարում են ՈւՊԸ նախագահի կողմից իրենց վրա դրված առանձին լիազորությունները,

բ) ՈւՊԸ գիտական գծով փոխնախագահն ՈւՊԸ նախագահի հանձնարարությամբ, նրա բացակայության ընթացքում, կատարում է ՈւՊԸ նախագահի պարտականությունները,

գ) ՈւՊԸ ընդհանուր հարցերի գծով փոխնախագահն ՈւՊԸ նախագահի հանձնարարությամբ իրականացնում է խորհրդի կողմից ընդունված որոշումների կատարումը՝ կապված ոչ գիտական կամ ընդհանուր հարցերի հետ,

դ) ՈւՊԸ միջազգային կապերի գծով փոխնախագահն ՈւՊԸ նախագահի հանձնարարականով իրականացնում է միջազգային կապերի հաստատում արտասահմանյան բուհերի և գործընկերների հետ:

### 3.10. ՈւՊԸ խորհրդի քարտուղարը՝

ա) արձանագրում է ՈւՊԸ խորհրդի նիստերը,

բ) ստորագրում է ՈւՊԸ խորհրդի նիստերի արձանագրությունները,

գ) տնօրինում է ՈւՊԸ արխիվը,

դ) կատարում է ՈւՊԸ նախագահի կողմից իր վրա դրված առանձին լիազորությունները:

## 4. ՈւՊԸ-Ի ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. ՈւՊԸ անդամ կարող է դառնալ յուրաքանչյուր ուսանող ում ՄՈԳ-ը գերազանցում է 20 բալանոց համակարգում 13 միջին գնահատականը և որն ընդունում է սույն կանոնադրությունը, իր գործունեությամբ նպաստում է ՈւՊԸ կանոնադրական նպատակների իրագործմանը:

4.2. ՈւՊԸ անդամությունից դուրս գալը կատարվում է տվյալ անդամի գրավոր դիմումի կամ ՈւՊԸ նախագահի՝ տվյալ անդամին ՈւՊԸ անդամությունից հեռացնելու մասին որոշման հիման վրա՝ սույն կանոնադրության 4.8 կետով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

4.3. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

- ա) ընտրել և նշանակվել ՈւԳԸ ղեկավար մարմիններում,
- բ) ՈւԳԸ ղեկավար մարմինների քննարկմանը ներկայացնել ՈւԳԸ գործունեության և ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ, դիտողություններ, գործնական ծրագրեր,
- գ) ազատորեն արտահայտել սեփական տեսակետը,
- դ) օգտվել ՈւԳԸ իրավական, ֆինանսական, տեխնիկական, տեղեկատվական և այլ աջակցությունից,
- ե) իրազեկ լինել ՈւԳԸ գործունեությանը,
- զ) ներկա գտնվել ՈւԳԸ խորհրդի նիստերին,
- է) ծանոթանալ ՈւԳԸ մարմինների աշխատանքի արձանագրման մասին փաստաթղթերին,

4.4. ՈւԳԸ անդամը պարտավոր է.

- ա) մասնակցել և աջակցել ՈւԳԸ գործունեությանը,
- բ) իր գործունեությամբ և վարքով բարձր պահել ՈւԳԸ հեղինակությունը, առանց ՈւԳԸ իրավասու մարմնի կողմից տրված լիազորագրի հանդես չգալ ՈւԳԸ անունից,
- գ) գործել սույն կանոնադրությանը համապատասխան, կատարել ՈւԳԸ կանոնադրական պահանջները, ՈւԳԸ ղեկավար մարմինների որոշումները:

4.5. ՈւԳԸ-ն կարող է ունենալ պատվավոր անդամներ: Պատվավոր անդամի կոչումը շնորհվում է ՈւԳԸ նախագահի որոշմամբ:

4.6. ՈւԳԸ պատվավոր անդամը օգտվում է ՈւԳԸ անդամի բոլոր իրավունքներից

## **5. ՈՒԳԸ-Ի ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ**

5.1 ՈւԳԸ միջոցները կարող են գոյանալ ԳԱԱ ԳԿՄԿ-ի բյուջեից կատարվող մասնահանումներից, հովանավորների կողմից կատարվող հատկացումներից, ԳԱԱ ԳԿՄԿ-ի կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

5.2 ՈւԳԸ-ն անվճար, համաձայն սահմանված կարգի, օգտվում է ԳԱԱ ԳԿՄԿ-ի տարածքային, գույքային, տեխնիկական և այլ միջոցներից:

5.3 ՈւԳԸ-ի միջոցները օգտագործվում են ՈւԳԸ-ի նպատակների և խնդիրների իրականացման համար:

## **6. ՈՒԳԸ-Ի ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ**

6.1 ՈւԳԸ-ն կարող է վերակազմակերպվել կամ նրա գործունեությունը կարող է դադարեցվել ՈւԳԸ խորհրդի որոշմամբ, փակ քվեարկությամբ, ձայների առնվազն 2/3-ով կամ օրենքով սահմանված կարգով:

6.2 ՈւԳԸ-ի լուծարումից հետո նրա ողջ գույքը տրվում է ԳԱԱ ԳԿՄԿ-ին: